

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԵՆՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ԱՐԴԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Ուշադրության ներկայացվող նամակները գրել է դրամատուրգ, մշակութային գործիչ Ալեքսանդր Արելյանը (1858—1940)՝ Արշակ Չոպանյանին (1872—1954)։ Նամակները բացահայտում են նրանց կյանքի ու գործունեության բոլոր դրվագները, պարունակում են գրական-բանասիրական հետաքրքրական փաստեր։ Հաղորդած տեղեկությունների մեջ ուշագրավ մանրամասներ կան նրդիչ Ալեքսանդր Դավիդովի մասին։

Նամակները պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Ա. Չոպանյանի՝ ֆ. 1 ք. № 2, 3, 9, 10, 13—16, 18, 19)։

ՎԱՐԱՋԳԻՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ

1.

<անթվակիր>

Մեծարգո բարեկամ պ. Ար. Չոպանյան

Այս քանի օրս պատրաստվել էի Ձեզ ուղարկելու իմ հայրենակից, ժողովրդական քանաստեղծ Աբրահամ Մարտիրոսյանի (Զարգար մականուն)՝ «Քնարբ», երբ նորից կարդացի Զիվանիի մասին Ձեր գրածը։ Պետք է ասեմ, երբ Զիվանիին ցույց տվի այդ «Քնարբ» և երբ նա կարդաց, ասաց.

— Պարոն Ալեքսանդր, բոլոր մեր աշուղներից ես միայն սրան կարող եմ նախանձել։

Չավելացնելով հանգուցյալի խոսքերին իմ կողմից ոչինչ, ես հարմար ռոպին կուղարկեմ Ձեզ։

Մնացյալը Ձեր գործն է...

Հարգանքներով՝
Ձերդ. Ալ. Արելյան

2.

28 փետրվարի, 1925
Նոր Նախիջևան

Սույն ամսի 14-ին Ձեր գրած նամակը ստացա։ Շատ ուրախ եմ, որ իմ գրածները անկորուստ Ձեզ են հասել կամ տեղ են հասել։ Կովկասյան մի լրագրի մեջ կարդացի, որ 200 հազար ռուբլի են հավաքել Ձեր հոբելյանին (չգիտեմ ինչու հեգնորեն «շողներից» էր գրված)։ Անշափ ուրախ եմ, որ այդպես ըստ արժանվույն եք գնահատվել։ Հարկ չկա ասել, որ փողը ձեզ պեսների համար ոչ թե նպատակ է, այլ միայն միջոց և որ այդ առթիվ բարեկամների շրջանում ասացի. որքան ես ճանաչում եմ հոբելյարին, եթե ճիշտ է, որ նա այդպիսի մի խոշոր գումար ստացել է, ապա պետք է սպասել, որ նա բոլոր այդ գումարը պետք է գործադրի մեր գրականության վրա։ Այսօր փոստին հանձնեցի Զարգարի «Քնարբ»։ Երևակայեցեք ինձ ոչ մի կերպ չհաջողվեց մի նորը գտնել։ Այս ուղարկածն էլ շատ տարիներ է պահում էի։ Մեջը պակասում է առաջաբանը, որի մեջ կա հրատարակողի կողմից մի քանի կենսագրական տեղեկություններ Զարգարի մասին։ Որովհետև Դուք գրում եք, որ իմ՝ Ձեզ այդ գիրքը խոստանալու «շուտով» կուղարկեմ*, ես իսկույն ուղարկեցի։

* Այդպես է բնագրում։

միաժամանակ գրելով հրատարակիչ... Գրիգորին Բաքու, որ շտապի ինձ գոնի ժամանակավոր ղրկել մի օրինակ, որ ես Ձեզ համար արտագրեմ պակաս և պատուված, կորած կտորները: Ինձ մոտ այդ տեղերը նշանակված են: Օթեն ուղարկի, կարտագրեմ, կուղարկեմ, եղեք միամիտ...

Հիշողությանս վրա հենվելով, Զարգարը պետք է մեռած լինի մոտ 1871 թ.: 1868—69-ին տեսել եմ նրան մոտ 30—40 տ., եթե ենթադրենք, որ մեռել է մոտ 45—46 տ. և եթե ճիշտ է, որ մեռել է 1871 թ., ուրեմն ծնված պետք է լինի 1835-ին¹:

Զփտեմ Սերունդի պատմածը Վերմոնտով՝ <ի> հետ Զարգարի տեսության մասին որքան ճիշտ գուրս կգա, կարևոր եմ համարում հիշեցնել, որ Վերմոնտովը ծնվել է 1814 թ. և մեռել կամ մենամարտում սպանվել մոտ 1843—44, երբ Զարգարը կարող էր լինել 8—9 տ., գուցե սխալվում եմ, երբ է ծնվել չգիտեմ²:

... Վերջերումս լույս է տեսել իմ «Պըլ-Պուդի»³ օպերետը, 4 արարով: Ամեն տեղ զբոսայգիներս աշող ծախվում են...

Սիրալիր ողջույններով՝
Ձերդ. Ալ. Արելյան

3.

17 օգոստոսի, 1930
Նոր Նախիջևան

Սիրելի բարեկամ Արշակ Զուպանյան

Ձեր բացիկը, որի վրա թեև չէր գրած, ստացել եմ: Շիրվանզադեն արդեն հանքաշրերում է, ողջ և առողջ: Սա ևս արգեն բուրրովին կազդուրվել եմ: Սակայն թե նա և թե ես 72 տարեկան ենք, իսկ այդ հասակի համար, ինչպես գիտեք, անակնկալները անօրինակ չեն:

Իմ երկու կտոր գրվածքների մասին ավելորդ եմ համարում կրկնության մեջ մտնել: Դրած են Ձեր՝ խմբագրի՝ «Անահիտ» հանդեսի կարգադրության տակ, վարվեցեք ինչպես գիտեք:

Խնդրում եմ, այն ՆՆ-ները, որոնց մեջ լույս կտեսնեն, ինձ ուղարկելու, վրաները փակցնել տաք ներփակյալ իմ հասցեից, վասն զի մեր ցրիչները շատ անգամ ֆրանսերեն կարդալ չիմանալով, դժվարության մեջ են ընկնում: Ցանկանում եմ Ձեզ լինել միշտ ողջ և առողջ և մանավանդ Ձեր ինքնահատուկ եռանդ ու աշխույժին անսպառելիություն:

Սրտագին ողջույններով՝
Ձերդ. Ալ. Արելյան

4.

11 հոկտեմբերի, 1930
Նոր Նախիջևան

...«Անահիտ» № 5-ի մեջ տպագրված էր Սեյադի 2 ոտանավորը:

Շամալի Սեյադին (Պետրոս Բեզ Մադաթյանը) համարում էին իբր շա-մախեցի, բայց «Քնար հայկականի»¹ մեջ հիշվում է իբր շուշեցի: Նրևի Ձեզ հայտնի է, որ նա իր ծերունական 60 տարեկան հասակում ընդունել էր ուղղափառություն, հետո զղջալով, իր Պոլիս եղած ժամանակ նորից ետ դարձել: Այդ բանում, այսինքն ուղղափառություն ընդունելում, քարոզում էր և ազգին՝ հետևել իր օրինակին: Սրա համար նրան ծաղրել են խորեն քհն. Միրզաբեգյան <ը> իր «Պարտիզակ» գրքույկի մեջ, հետո Աբրահամ Մարտիրոսյան Զարգարը, որի «Քնարը» ես ուղարկել եմ Ձեզ: Նրա մեջ ակնարկված է Սեյադը. տես.

1. «Մարդ կա, մարդ է աշխարհում»

2. «Ուզում եմ ես այն գինին»

3. «Ասացյալ վասն Միրաբի» և այլն. այս վերջինը գրված է Սեյադի «Սև Միրաբ, ճերմակ Միրաբի» իբր պատասխան (տես «Քնար հայկական»): Սե-

յադի լեզուն անտանելի է, անճոռնի, գռեհիկ։ Տեղ-տեղ գրաբար հոլովներ, տեղ-տեղ թաթարական բառեր, տեղ-տեղ բարբառների խառնուրդ։ Այդ նրա լեզուն պախարակում է և Միք. Նալբանդյանը իր Պետրոգրադի Պետրոպոլիսի բանտում եղած ժամանակ, երբ նա խնդրած է լինում ուղարկել իրեն Սալաթ-նովայի բանաստեղծությունները, իսկ նրա փոխարեն սխալմամբ ուղարկած են լինում Սեյադինը, Նրկուսի անունների մեջ կա նմանություն, իսկ տաղանդի տեսակետից Սեյադի մասին խոսել անգամ արժանի չէ, թեև նա ունի մի բանի լավ բանաստեղծություններ։

Սակայն նրա օգտին ունիմ Ձեզ, սիրելի բարեկամ, հաղորդելու մի բան, որը կարծում եմ ոչ ոք չի գիտի։ Մոտավորապես 1890 թվին Բաքու ինձ են բերում Սեյադի ոտանավորների հավաքածուի մի տետրակ։ Սեյադը գրել էր իր ձեռքով, գրել էր մեծ խնամքով. երևի արտագրված էր, որովհետև ոչ մի տեղ ոչ ուղղում կար, ոչ ջնջում և այլն։ (Ասում էին էլի 3 տետրակ կա)։

Սեյադը ծնվել է 1810 թվին, հայտնի է, որ նա ծառայել է ռուսաց զորաբանակում և ունեցել է կապիտանի աստիճան (կամ ռոտմիստր), գտնվելով Լոռիի կենտրոնում, նա պատահել է և ծանոթացել Միքայել Տարիելիչ Լորիս-Մելիքյանը հետ։ Լորիսը այն ժամանակ եղել է պատանի (ըստ իս երևի 18—20 տարեկան), կադետ կամ յունկերի աստիճանում զինվորական դպրոցի տեսուչ և ահա այդ իր տետրակում, իր ձեռքով գրած Սեյադը անում է մի դարմանալի մարգարեություն. «Կգա ժամանակ, որ հայոց ազգը կպարծենա քեզանով»։

Ձեռագիրը բերել էին, որ ես կարդամ և հայտնեմ իմ կարծիքը, թե արդյոք ունի՞ արժանավորություն տպագրված լինելու (բերողը շամախեցի տպարանատեր Ղասաբյանն էր). ես բացասական վկայություն տվի։ Վերջերումս, երբ Բաքու էի, շատ հարցուփորձ արի, հատկապես այդ 2* մարդու մարգարեություններն էլ իմանալու համար գտնել Սեյադի ձեռագիրը, բայց այդ ինձ չհաջողվեց...

Սեպտեմբերի 29-ին սրտի պայթյունից 66 տ. հասակում հանկարծամահ եղավ իմ սիրելի բարեկամ Գևորգ Հովհաննեսի Չուբարը²։ Ուղարկավորությունը մասնակցում էր ահագին և խառն բազմություն։ Հանգուցյալը թողել է շատ ձեռագրեր, որոնց մեծ մասը վերջերումս գրված...

Այսօր գրեցի Նրեան մեր գյուղագիր Հովհ. Մախասյանին³, «Անահիտի» համար իր գրած պատկերներից ուղարկի տպագրելու համար։ Կարևոր աշխատակից կլինի...

Ա. Արելյան

5.

5 նոյեմբերի, 1930

Նոր Նախիչևան

Սիրելի բարեկամ պ. Ար. Չոպանյան

Երեկ ստացա Ձեր հոկտեմբերի 26 նամակը։

Այս նամակիս հետ ուղարկում եմ Չուբարի¹ վերջին հոբելյանի առթիվ իմ հրատարակած մի թերթը, որի մեջ գրում եմ կենսագրականի մասին տեղեկություններ...

Մենք ունենք մի շատ նշանավոր երգիչ. Դավիդով² անունով էր հայտնի ամբողջ Ռուսաստանին։ Թաղավորագների մեջ ամենահարուստ միլիոնատեր ռուս վաճառական ընտանիքների սիրելի և պաշտելին էր։ Նա ժողովրդական կամ մասամբ էլ ցիգանական կոչված երգերի երգելու մեջ մի նոր շկոլա ստեղծեց։ Ռուս թերթերի շատերի մեջ ահագին գովեստներ էին տպվում նրա մասին։ Նրկար ժամանակ, նաև և այժմ էլ նրա շկոլային էին հետևում շատ

* Այդպես է բնագրում։

երգուհիներու Բայց, ավազ, նրա արեւելյան հմայքը և ոգին ոչ մեկը չկարողացավ ոչ խորացնել և ոչ արտահայտել: Հանճար էր Դավիդովը բառի բուն նշանակութեամբ. գնաց իր հետ տանելով իր մեծ քանքարը: Չուբարը մի քանի քօծեր հիշում էր նրա համերգային կյանքից... Ես մի անգամ Բաքու եմ լսել նրա երգերը. մի 2 անգամ էլ՝ Նախիջևան: Չնայելով որ արդեն 60 տարին անց էր, տակավին ունկնդիր սրահը ամբողջովին լալիս էր, երբ նա երգում էր իր սրտառու երգերը: Նույնն էր և Մոսկվա: Նույնիսկ մի անգամ օրկեստրի դիրիժորը իր փայտիկը խփում էր առաջը դրած նստարանին, գլուխը դնում վրայից և սկսում հեկեկալ... Նրան հետևում է ամբողջ խումբը, ապա ամբողջ ժողովուրդը... Այդքան խորաթափանց և հմայիչ էր նրա տեխնիկան: Նախիջևան վերջին անգամ երգելուց, ես վագեցի արտասուքն աչքերիս և փաթաթվեցի իրենով:— «Քո տունը չքանդվի Դավթյան, սա ինչ աղբի, կոտորեցիր մեզ...», բայց նա սուղոր էր այդ բանին: Ամեն երեկու շրջապատված էր պաշտողներով, որոնց մեջ շատ ղեղեկուհիներ: Դրամը նրա համար ոչ մի նշանակություն չուներ, ստանում էր և շուսլում նույն օրը:

Պատմում են մի անգամ Մոսկվա, թատրոն պահողներից մեկը՝ հայտնի Կորշը* փողի մեծ կարիք է ունենում: Նա դիմում է Դավիդովի օգնությանը, որը նրա թատրոնի երգիչն էր: Իսկույն Դավիդովը դնում է, այսպես կոչված, (Замоскварецкая) Մոսկվա գետ Բեցկայա մաս, որտեղ ապրում էին պաշտողուհիները և մի քանի ժամանակից հետո, երբ ամենքին այցելություն է տալիս, բերում է Կորշին հանձնում 25 հազար ռուբլի: Ահա թե որքան համակրություն և սեր էր վայելում նա այն ժամանակին Մոսկովի հարուստ ընտանիքներում: Ես հիմա տեսցած եմ, երբ այդ անդուգական երգիչը, որի նմանը ընտելություն ոչ մի երկրում դեռ չի ստեղծել, այցելած լինեի Նիժնոնովոյ, Կոնստանտինովոյ և մեր շքեպիրյան Աղամյանը, ապա պիտի թողներ մի անմահի հիշատակ, որպիսին նա թողեց միայն մեղպեսների սրտերում:

«Երգվում եմ երկնքով և երկրով, Դավիդովի նման երգիչ ոչ եղել է, ոչ կա և ոչ լինելու է»,— ասաց մի անգամ մի բարեկամ, որ Մոսկվա լսել էր նրա երգը, այն ժամին, երբ մենք խոսում էինք առհասարակ երգիչների մասին:

77 թվին իմ մեծ եղբայր Ներսեսը⁵ (որ այժմ 75 տարեկան է և Թիֆլիս գործում է իբր կովկասագետի) մի օր շատ գովասանքներ թափելուց հետո, պատմեց, <թե> Դավիդովը ինչպես էր խաղում և երգում մի աննշան վոկալի մեջ մշեղի: Կիվկիվի դերի մեջ: Ուղիղ 30 տարի հետո այդ միևնույն «Դալալ Ղադու»⁴ պիեսի մեջ միևնույն Կիվկիվի դերի մեջ ես տեսա Դավիդովին Նախիջևանի բեմի վրա: Ասել հարկավոր չի, որ այդ օրը անմահ հիշատակ թողեց ամենքիս սրտերի մեջ: Նախիջևան ես նրան շատ խնդրեցի իր մասին մի քանի կենսագրական տեղեկություններ տա ինձ: Խոստացավ, չտվեց, մոռացավ կամ ավելի լավ է <ասել> անուշադիր թողեց: Հիշում եմ միայն այն, որ տեղացություն է արել, որտեղ նրա ձայնը լսելով, մի նախիջևանցի բերել է նրան նույն տիրացություն անելու համար Նախիջևան: Այդտեղից գնացել է Թիֆլիս և իբր արտիստ մտել մի ռուս օպերետային խումբ: Մի օր պրիմերի⁶ դեր կատարող ռուս դերասանը հիվանդ լինելու պատճառով ուզում են ներկայացումը հետաձգել, այդ ժամանակ Դավիդովը ասում է՝ նրա դերը ես կկատարեմ: Նույնը պնդում է և մի այլ ռուս դերասան, թե վստահ եղեք, իմպրեսարիո, Դավիդովը կարող է: Դերասանապետ և անտրպրիսիորը համաձայնվում է և ահա այստեղ սկսվում է նրա կարիերան դերասանական: Նա իր երգով ապշեցնում է ամենքին: Նույն վերահիշյալ դերասանը հետո խորհուրդ է տալիս գնալ Մոսկվա: Նամակ է տալիս Կորշին և Կորշը ընդունում է

* Ալ. Արելյանը մի այլ նամակում գրում է, որ իր նշած Կորշ անունը սխալ է, պետք է լինի Լենսկին: Մյուս էջերում նույնպես՝ Կորշի փոխարեն կարգալ Լենսկին:

** Այդպես է բնագրում:

ներան: Պատմում են, իբր նա Մոսկվա հայոց եկեղեցում երգում էր, ոռւս երգասեր կամ գեղարվեստավոր ժողովուրդը լցվում էր այնպես, որ հայերին տեղ չէր լինում:

Ձափում եմ որ ես չունեմ նրա պատկերը. թե չէ կուղարկեի Ձեզ, և ով գիտե, գուցե մի օր լույս կտեսնի նրա մասին իբր մի արժանավոր հայ դավակի մի արժանավոր էլ գրչի հիշողութիւնները: Գուցե թիֆլիսում մեծ եղորորիցս մի բան իմանամ, որը ուրախությամբ գրի կանցկացնեմ Ձեր համար: Մնամ համակրող և սրտագին բարեկամությամբ՝

Զեք. Ալ. Արեւիյան

6.

10 հուլիսի, 1931

Նոր Նախիջևան

Սիրելի բարեկամ պ. Ար. Զոպանյան

Այս 12 օրը, որ Երեւանից եկել եմ, կարելի է իմ կյանքի «Դավիդովյան» շրջան կոչել, այնքան եմ տարվել նրանով: Եվ ի՞նչ, ամեն մի նրան ճանաչողներին դարձյալ նորանոր բաներ եմ լսում: Բայց նրանք վերջ չունին և ես այս նամակիս հետ դարձյալ մի քանի տեղեկութիւններ հաղորդելով, վերջացնում եմ:

Սիրելի բարեկամ, ինձ աջողվեց գտնել Դավիդովի ևս մի պատկերը, որ զետեղված էր ոռւս «Իսկրի» (Կայծեր) իլյուստրասիոնում, որը և ներփակ ուղարկում եմ: Հարկավ ոռւսերեն մակագրութեան փոխարեն կղենք իմ թարգմանածը պատկերի տակ...

Հարգելի բարեկամ

Զեք. Ալ. Արեւիյան

7.

12 օգոստոսի, 1931

Նոր Նախիջևան

Սիրելի բարեկամ պ. Ա. Զոպանյան

Դավիդովի մասին մի քանի խոսք ևս, մնացյալը թողնում են մշակելու Ձեզ:

Սրանից շատ տարիներ առաջ նորնախիջևանցի հայերը սովորութիւն ունեին Երուսաղեմ ուխտի գնալու, ավելի երկտասարդները այդքան հեռուները գնալու համար, հավաքվում էին և խմբերով սուրբ Կարապետ գնում: Մի այսպիսի խումբ էջմիածնով վերադառնալուս, մոտենում է նրանց մի շատ գեղեցիկ դեմքով, հրապույրով լի աչքերով պատանի, Արսեն Կարապետյան անունով և ասում.

— Պարոններ, ինձ էլ առեք ձեզ հետ:

— Նստի կառավարնի մոտ,— ասում են նրան ուխտավորները և հետ-
<ները> տանում Նոր Նախիջևան:

Ահա այդ պատանին է, որ ժամանակով դառնում է հանճարեղ երգիչ, որը հետո կոչվում է Ալեքսանդր կամ Սաշա Դավիդով:

Ես կարծում եմ Դավիդովի մասին հոգավածի առաջաբանից հետո պետք է ղենել այս կտորը, քանի որ չի հաջողվում իմանալ նրա որտեղացի լինելը, թեև այդ կտորից կարելի է ենթադրել, որ նա վաղարշապատցի է եղել:

Ահամյանը գրում է Դավիդովի մասին. «Նա ոչ թե միայն երգիչ է, այլև նկարիչ, վասն զի նա իր երգերով լրատ երգի նյութի ունկնդիրների աչքերին պատկերը նկարում էր»: Հետո գրում է. «Դավիդովի երգի մեջ կար մի նոտա, որը չէր աջողվում հնչել ոչ մի երգիչ»: Ըստ իս՝ սխալ է: Հենց այդ նոտան է, որ հատկապես Դավիդովի հանճարն է ստեղծել և նա մի նոտ չէ, ոչ, նա ամբողջ նրա ստեղծագործած շկոլան է:

Հատվածի մեջ պետք է ավելացնել, որ մեր հռչակավոր հանճարեղ հայ ծովանկարիչ Ալվազովսկին ոուս թերթերից և բարձր շրջանի մարդկանցից լսելով Ադամյանի և Դավիդովի անշափ գովեստները, ցանկացել է տեսնել նրանց: Ալվազովսկին թատրոնների և մանավանդ օպերետների սիրահար և հաճախորդներից չէր, բայց սրտով հայ լինելով, չէր կարող այդ զիջումը չթողլ տալ ինքն իրեն: Եվ ահա մի օր 3 հայ հանճարեղներ սեղմում են իրար ձեռք:

Այս տողերով էլ վերջացնում եմ նամակս: Ձեզ եմ թողնում, սիրելի բարեկամ, իմ սոված տեղեկություններից կազմել ինչ կուզեք: Կգրեք Ձեր անունից:

Այսօր երկրորդ անգամ իմ բարեկամ Կոստանդին Կրասիլնիկյանին՝ գրեցի, որ իր թարգմանությունները Պուշկինից ուղարկի Ձեզ: Դուք եմինչև այժմ և արդեն ուղարկել է: Ինձ տեղեկություն տակավին չի տվել...

Խորին հարգանք՝

Ալ. Արեւյան

8.

8 հոկտեմբերի, 1931 թ.

Նոր Նախիչևան

Սիրելի բարեկամ պ. Չոպանյան

... Շնորհակալությամբ ստացա և «Անահիտի» այս տարվա մայիս—օգոստոսի գրքերը: Առանձին հետաքրքրությամբ կարդացի Ձեր իսկ դրած մեր անմոռանալի կենդանի մեռյալ Կոմիտասի կենսագրությունը¹: Մինչ արտասուք սրտաշարժ տողերը:

Ավաղ, այդ խեղճը եթե հիվանդացած չլիներ մի 20 տարի և ահագին ծառայություն պիտի կարողանար անել հայ երգի գործին: Ձեր մյուս Քրոնիկից² ես ստացա այն տպավորությունը, որ Դուք, սիրելի բարեկամ, մի բարի սիրտ և հոգի ունիք, որ Դուք մի առաքինի հայ գրչի տեր եք և Ձեզ նման մի բարեկամ ունենալը առնվազն երջանկություն պետք է համարել:

Դուք լավ եք նկատել, որ մեր խորհրդային կառավարությունը գիտե լավ գնահատել գրչի մարդկանց: Արդարև, ինչ էր դրությունը ցարական ռեժիմի ժամանակ հայ ամենալավ մի գրողի, թեկուզ հենց Բաքոյի: Իր կենդանության օրոք առանձին նամակով նա գնագատվում էր իր դրությունից ինձ: Այդ նամակը, իր խիստ հետաքրքրական լինելու պատճառով նմիքեցի մեր Նրեանի պետական թանգարանին: Այնինչ այժմ խորհրդային Հանրապետությունը ամեն կերպ ձգտում է բարելավել ընդհանրապես գրողների դրությունը:

Առեք ինձ. ես ապրում եմ Անդրկովկասից դուրս, ապրում եմ ռուսական մասում. չնայելով սրան, ինձ հատկապես այդ մասում թոշակ են տալիս: Ո՞վ կարող է երբևիցե երևակայել, որ մի հայ գրող <կարող> է ոչ հայ կառավարությունից թոշակ ստանալ: Դեռ մի կողմ թողնենք Անդրկովկասի ֆեդերատիվ մայրաքաղաք Բաքուն, Թիֆլիսը և Նրեանը, որտեղ ամեն մի տեղացի գրող առանձին ազատ վարձատրություն է ստանում:

Ֆարական ռեժիմի օրոք հայ գրողների դրության մի դեղեցիկ նկարագիրը տալիս է մեր վիպագիր Նար-Դոսը իր «Նեղ օրերից մեկը» գեղեցիկ պատկերում, որը, անշուշտ, Ձեզ ևս պետք է հայտնի լինի:

Ես դեռ չեմ խոսում այն մասին, որ Հյուսիսային Կովկասի այն մայրաքաղաք Ռոստովը (Նախիջևանի կյած) պահում է հայոց պետական թատրոնական խումբ-շրջիկ, որի վրա ծախսում է տասնյակ հազար ռուբլիներ: Նույն տեսակ հայկական խումբ պահում է Աբխազիան: Նրա ի՞նչն է Գիկուբան և նա Գիկուբայի ինչը, ո՞վ է Աբխազիան և նա հայի ինչն է: Բայց նա ևս մի 10--15 հազար հայության համար պահում է իր միջոցներով հայկական պետական թատերական խումբ: Եվ միայն մերոնց անտարբերությունն է, որ

նման խմբեր շունհեն 13 հազարանոց Ղրիմի հայերը և 7—8 հազարանոց Ուկրաինայի հայերը:

Ձեր Քրոնիկի մեջ հիշում եք, որ Նղիշեն աշխարհաբարի թարգմանված է մինչև այժմ: Այնինչ այս կողմերում նախ թարգմանված է Մոսկվա, երևի Լադարյան ճեմարանի նախկին մի ուսանողի ձեռքով, կարծեմ Սիմոնյան³: Եվ ունեի այդ թարգմանությունը ինքս: Բավական՝ աջող մի գործ:

Երկրորդ անգամ թարգմանել է իմ անմոռանալի մի ուսուցիչը՝ նախ Հայրապետ Ղուկասյան⁴, Շամախի, երբ 13—14 տարեկան էր, հետո Բաքվում Գարեգին անունով քահանա դարձած: Այդ պատվական անձը մի ինքնուս գյուղացի տղա էր, որ հետո դարձավ ուսուցիչ-տեսուչ Շամախի, տեսուչ Ալեքսանդրապոլ և այլն, բանասեր... Նամակս վերջացնում եմ մի վերջին տեղեկություն հայտնելով Դավիդովի մասին, որ նոր լսեցի և որ ես չգիտեի:

Բանից դուրս է գալիս, Դավիդովը իր երգերի գլուխ «Պարա-գնդդի» (ս. Ջուլգա աշխատ) երգերիս ինքն էլ արտասուք է թափելիս եղել: Հարկավ այդ կտորն էլ պետք է ավելացնել իր կենսագրականին: Մինչև այժմ էլ շատերի համար վիճելի է, արդյոք դերասանը դրամատիկ թուպեներին ինքը լաուլ իրավունք ունի, թե ոչ: Կան դերասաններ, ինչպես, օրինակ, իմ եղբայրս⁵, երբ նա խաղում էր Ռովետտի «Բարեկամներ»⁶ պիեսի մեջ խմբագրի դերը, կամ երբ «Տրիլբի»⁷ (գուցե Ձեզ անժանոթ) պիեսի մեջ Սվինգալիի դերը, որ նրա գլուխգործոցներից մեկն է, նա լալիս է, արտասուք է թափում: Բայց կան և դերասաններ, որ ամենաստաշարժ դերերի մեջ արցունք չեն թափում և դերից հետո իսկույն ժպտում են (իրենց խուցի մեջ):

Իմ անհատական կարծիքը առաջինների կողմն է: Ձէ որ մենք մի սրտաշարժ պատկեր կարդալուս լալիս ենք (ինչպես երեկ, երբ կարդում էի Կոմիտասի մասին Ձեր գրածը): Ուրեմն ինչպես կարող է մի մարդ անտարբեր լինել դեպի իր զգացումը: Ես իմ պիեսի մեջ՝ «Մարվող ճրագներ»⁸, հոր դերը խաղալուց չեմ կարողանում չլալ: Ինքս եմ գրել, գիտեմ, որ այդ մարդը իրականում չկա, այլ իմ երևակայության ծնունդ է, բայց այնուամենայնիվ թե կարդալուս և թե մանավանդ բեմի վրա խաղալուս, լալիս եմ: Չգիտեմ Ձեր կարծիքն ինչ է:

Իմիջիպալոց, վաղը ես Ձեզ կուղարկեմ մի «Մարվող ճրագներ» (երեք պիես միասին), որ լույս է ընծայել պետհրատը (3 պիեսից 2-րդ՝ «Միկոյի հարսանիքը», 3-րդ՝ «Նամվթի ֆանտան»)՝ Չգիտեմ ինչպես է պատահել, որ մինչ այժմ մտքովս չի անցել, երևի Դուք էլ երբեք կարդացած չեք լինիլ: Առհասարակ ես Ձեզ չեմ ուղարկել մինչ այժմ տպագրությամբ լույս տեսած իմ մեծ պիեսներից 3-ը, որոնցից մեկն է «Մարվող ճրագները», 2-րդ՝ «Նշանվածները»¹⁰, 3-րդ՝ «Պըլ-Պուդի»: Տարաբախտաբար այս վերջին 2 պիեսներից ոչ մեկն էլ չունիմ ես, որ վաղվա ուղարկելիքների հետ նրանք էլ ղրկեի: Ինչևէ, եթե ձեռքս ընկնեն, առաջ նվազ Ձեզ կղրկեմ: Մինչ այժմ մոռացածիս ներողամիտ եղեք: Մի երկու խոսք իմ մասին:

Հայաստանի պետհրատը ինձանից վերցրել է հրատարակելու համար մի պիես, որ կրում է «Խնամիտան»¹¹ վերնագիրը, իսկ այստեղ, Ռոստովում, Մանրագգերի պետհրատը՝ «Ննպմաններ» պիեսս: Երբ տպագրվեն, անշուշտ, Ձեզ համար էլ կուղարկեմ...

Հետո, այս 2 օրս վերջացնում եմ մի նոր պիես, «Գանձ» վերնագրով: Արտագրությունը կվերջացնեմ 2 օրից, 2 օրինակ, մեկը Բաքվի Պետական կարմրագրող հայ խմբի համար իբրև Բաքվի կյանքից առած նյութը, և, մեկն էլ Երևանի համար: Սրանց մասին էլ պետք է լուսություն պահել, մինչև որ դրական տեղեկություն կտան ինձ: Ձեր նամակը ես վաղուց եմ ստացել, բայց ինչպես տեսնում եք, իմս, հակառակ սովորության, ուշացրել եմ նրա համար, որ մի գրելու նյութ ունենամ:

Կոստանդին Կրասիլնիկյանը Պուշկինից իր թարգմանությունը՝ գրեցի ուղարկի Ձեզ՝ «Անահիտ» համար: Երևի կստանաք: Պետհրատը մի մասը նրա հրապարակել է, մնացյալը մնում է մոտը:

Բարեկեցեք իմ անշնորհք բարեկամ և իմ սիրելի բժ. Երվանդ Մինասյանին, եթե ծանոթ եք և եթե հանդիպում եք:

Եթե պիեսս հաղորդվելու ունենա, գուցե գնամ Բաբու և Երևան, այնտեղ կգրեմ Ձեզ:

Պիեսդ սեղմվելով Ձեր ձեռքը, մնամ հարգող և սիրող՝ Ալ. Արելյան:

9.

8 հուլիսի, 1933

Նոր Նախիչևան

Սիրելի բարեկամ պ. Ար. Չոպանյան

Ձեր «Անահիտի» վերջին՝ 1932 թ. նոյեմբերի և 1933 թ. ապրիլի, համարը մի գրքով լույս տեսած, ստացաւ Սկզբից ես առանց ծրարը նայելու կարծեցի իմն է, հետո երբ ուշադիր եղա, գտա որ Գարեգին արք. Հովսեփյանի համար եք ուղարկել: Բայց նա այլևս հաղիվ այստեղ դա, որովհետև իր պաշտոնը էջմիածնում է: Ուրեմն պարտքս է, որ ուղարկեմ իրան, որը և կկատարեմ ուրախությամբ: Զգիտեմ ինձ համար էլ առանձին ուղարկել եք, թե ոչ: Երևի չեք ուղարկել, վասն զի մինչ այժմ չեմ ստացել:

Ես ամենայն սիրով և առանձին հետաքրքրությամբ կարդացի ամսագիրը: Բայց երբ հասա այնտեղ, որ գրում եք էջմիածնից Պարիզ գնալու համար անցել եք Ռոստոմով, շատ կոտորվեցի: Եթե Դուք գտնե հայտնած լինեիք, ինքս կգայի կայարան Ձեր տեսության... Զէիք հայտնել, չէիք կամեցել անհանգիստ անել... Փաստը նա է, որ այնքան մոտ էր ինձ համար Ձեզ հետ հաճելի տեսությունը և հանկարծ նորեն հեռացավ:

Դավիդովի մասին, երևում է Ձեր մտադրությունը փոխել եք, որ չեք հիշում անգամ: Այնինչ Դուք գրել էիք ինձ, որ հետևյալ Ձեռքում կհրատարակեք: Այդ «հետևյալ համարը» եթե չեմ սխալվում, արդեն կրկնվեցավ 2 անգամ:

Ձեր հոգվածի՝, ինք. Հայաստանի գովելի գործերի մասին տողերը ինձ շատ ուրախացրին: Այդ խեղճ կրակ երկրի վրա եկած (թե բերած) արհամարհաներ, կարծես ուղղակի ճակատագրական են եղել... մեկ-մեկ կարծում ես բախտը առատությամբ պետք է ժպտա նրան, մեկ էլ հանկարծ մի շնչին պատճառով խորտակվել է ամեն հույս և երևակայություն: Ամենից շատ ինձ վրա ազդել է Ամերիկայից հուսալը... և հիասթափումը, հետո Ֆրանսիայի վերաբերմունքը, մի րոպեում կիլիկյան հայերից դատարկելու խնդրի մեղտեղ գալը և այլն: Մի բան ինձ ամենից շատ է վախեցնում և տխուր մտքերի պատճառ լինում, այն է... ինձ թվում է մի 2 դար, 3 դար եւ և գաղթավայրերի հայությունը վերջնականապես պետք է ձուլվի թե իրենից կուլտուրականապես բարձր ազգերի և թե նույնիսկ ցած մակարդակի վրա գտնվող ազգերի հետ: Այդ վախը գոյություն ունի... հարկավ հայի հայությունից օտարանալու մասին է: Միակ փրկությունը ինք. Հայաստանն է, որին ամեն մեկս պետք է թե տանք, օգտավետ քինենք, կպչենք:

Սիրելի բարեկամ, թույլ տվեք Ձեզ մի նեղություն տալ: Կարող եք հաղորդել, թե պատահալ գրականության մեջ էսնաֆների (համբարների) վերաբերյալ արատական արհեստագրական, կաղմակերպչական առանձին առանձին համայնքների կանոնադրություններ և այլն, ինչ նյութեր կան: Գուցե և իմանաք, կա արդյոք առանձին գրքեր և որտեղից կարելի է ձեռք բերել: Գուցե կան լրագրերի և ամսագրերի մեջ, որ կարելի կլինի փնտրել Երևանի Մատենադարանում: Շատ շնորհակալ կլինեմ իմացածներդ այդ մասին հաղորդեիք ինձ:

Հազար ափսոս ինք. Հայաստանում եղաք ձեռքը և միջոց չունեցաք շատ բան Ձեր աչքով տեսնելու... Զի կարելի չխոսնարվել կոմունիստների հանձարի, տաղանդի հրաշագործության հետ: Ամեն տեղ ուր նրանք ոտը են դնում, երկիրը կենդանանում է: Կան գործեր, որոնց առջև մարդ պաշտած է մնում: Այդ հրաշագործություններից անմասն չէ մնում և մեր ինք. Հայաստանը:

Պետք է ևս մի 20—25 տարի և հետո նորից տեսնել... Իսկ մենք այդ բախտին իհարկե չենք հասնիլ (գոնե՛ ես, որ 75 տ. եմ)...

Մնամ միշտ խորապես Ձեզ հարգող՝

Ալ. Արեւիկայ

10.

14 հունիսի, 1934

Նոր Նախիջևան

Սիրելի բարեկամ Արշակ Չոպանյան

Սույն թվի մայիսի 11-ին մի ամսով գնացել էի Հայաստան:

Ուղարկում եմ ներսիակ «Շրեք աղջիկ», մի ուսանավոր, որ շատ տարիներ առաջ թարգմանել եմ ռուսերենից... Արեք ինչ կուզեք:

Ես ունեմ գրած Շեքսպիրի կենսագրությունը, Շեքսպիր և Բեկոնյան խնդրի մասին մի գրվածք, որ մյուս անգամ կուղարկեմ:

Խորին հարգանքով՝

Ձերդ. Ալ. Արեւիկայ

11.

19 հունիսի, 1934

Նոր Նախիջևան

Սիրելի բարեկամ պ. Չոպանյան

Ներսիակյալ ուղարկում եմ Ձեզ հետևյալ իմ 2 հորվածները—Շեքսպիրի մասին կենսագրական տեղեկություններ, որ ես ժողովել եմ զանազան արխիվներից և Շեքսպիր-Բեկոնյան խնդրի մասին: Թողնում եմ, որ ինքներդ անեք ինչպես և ինչ կամիք:

Խոր հարգանք՝

Ձերդ Ալ. Արեւիկայ

ՄԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.

1. Արազամ Մարտիրոսի Բաբայան (Ջարգար) (1824—1874)—աշուղ, ծնվել է Շամախիում, սովորել է տեղի դավառական դպրոցում, Բարոյախրատական և սիրային երգերի հեղինակ է. գրել է նաև ագրեբջաներին:

2.

1. Տես նախորդ նամակի ծանոթագրությունը:

2. Նամակագիրը, ինչպես ինքն է ասում, շփոթել է Լեւոնտովի մենամարտում զոհվելու տարեթիվը (1841 թ.), ճիշտ չի գրել Ջարգարի տարիները, որից և առաջացել է այդ տխուր: Ջարգարը հիշյալ թվին եղել է 18 տարեկան, հետևապես մինչ այդ կարող էր ծանոթացած լինել ռուս բանաստեղծի հետ:

3. Ալեքսանդր Արեւիկայն, Պրլ-Պուլի, Նոր Նախիջևան, 1923:

4.

1. «Քնար հայկական»—ուպագրություն Մ. Մ. Միանսարյան, Պետերբուրգ, 1868:

2. Գևորգ Հովհաննեսի Չուբար (Պարոնյան, 1864—1930)—գրամատուրգ, գերասան, թարգմանիչ, գրական քննադատ:

3. Հովհաննես Մկրտչի Մալխասյան (1866—1931)—գյուղագիր, մանկավարժ, թարգմանիչ, «Մեր ձայնը» լրագրի հրատարակիչ և խմբագիր:

ԼԵԱՔԻՐ 5—7

1. Նկատի ունի Գեորգ Զուբարին (Պարոնյան):

2. Դավիդով Ալեքսանդր Դավթի (Կարապետյան Արսեն Դավթի, 1850—1911)—ծնվել է Վաղարշապատում, սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, երգիչ, օպերային և էստրադային արտիստ, խաղացել է Թիֆլիսի, Մոսկվայի թատրոններում և այլ թատերական խմբերում, համերգ է տվել Փարիզում, Հոլանդիայի և հատկապես գնչուական ուսմանների կատարմամբ, լայն ճանաչում է ունեցել հայ և ռուս արվեստագետների միջավայրում:

3. Արելյան Ներսես (1855—1933)—հայ հասարակական և գրական գործիչ, ավարտել է Մոսկվայի տեխնիկական դպրոցը, 1881 թ. Մոսկվայում հիմնել է «Հայրենասիրական միությունը», տնտեսագիտական հոգնածնեցող թղթակցել է «Մշակ», «Արձագանք» և այլ պարբերականներին:

4. Նկատի ունի Նիկողայոս Փուդինյանի «Դալալ Ղաղո» պիեսը:

7.

1. Կոստանդին Կրասնիկյան—Թարգմանիչ (Թարգմանել է Պուշկինից): 1900 թ. Ավետիք Արասխանյանից գնելով «Մուրճը» տնօրինելու իրավունքը, դառնում է ամսագրի հրատարակիչը, բայց ոչ խմբագիրը:

8.

1. Նկատի ունի Ա. Զոպանյանի «Կոմիտաս և հայ երաժշտությունը» հոդվածը: Տես «Անահիտ», Փարիզ, 1931, մայիս—օգոստոս, № 1—2, էջ 103—127:

2. Ա. Զոպանյան, Քրոնիկոն (տեսություն հայ արվեստի, հայ կյանքից և գրականության, գրական), «Անահիտ», Փարիզ, 1929, մայիս, № 1, էջ 80—101, սեպտեմբեր, № 3, էջ 117—121: 1930, սեպտեմբեր—հոկտեմբեր, № 3, էջ 117—123: 1931, մայիս—օգոստոս, № 1—2, էջ 149—176, սեպտեմբեր—դեկտեմբեր, № 3—4, էջ 150—190: 1932, հուլիս—հոկտեմբեր, № 1—2, էջ 159—183:

3. «Նդիշ» վարդապետի պատմությունը Վարդանի և հայոց պատերազմի համար, Թարգմանություն Մարտիրոս Սիմոնյանցի, Մոսկվա, 1863:

4. «Նդիշ» պատմությունը Վարդանի և հայոց պատերազմի համար, Թարգմանեց Հ. Ղուկասյանց, Թիֆլիս, 1891:

5. Նկատի ունի դերասան և թատերական գործիչ Հովհաննես Արելյանին (1865—1936):

6. Խոսքը իտալացի գրող Ռովետա Զերուամոյի (1854—?) «Բարեկամներ» պիեսի մասին է:

7. Նկատի ունի ռուս դրամատուրգ Գրիգորի Գեի «Տրիտրի» պիեսը:

8. Ալեքսանդր Արելյան, Մարվոզ ճրագներ, Թիֆլիս, 1903—1911, Երևան, 1936:

9. Ալեքսանդր Արելյան, Երեք պիես՝ Մարվոզ ճրագներ, Միկելի հարսանիքը, Նավթի ֆանտան, Երևան, 1930: «Նավթի ֆանտան» պիեսը առաջին անգամ տպագրվել է Բաքուում, 1904 թ.:

10. Ալեքսանդր Արելյան, Նշանվածներ, Թիֆլիս, 1911, Երևան, 1936:

11. Ալեքսանդր Արելյան, Խնամատես, Երևան, 1936:

9.

1. Արշ. Զոպանյան, Տպագորություններ ու հիշատակներ Խորհրդային Հայաստանին, «Անահիտ», Փարիզ, 1932 նոյեմբեր, 1933 ապրիլ, № 3—6, էջ 78—129: